ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 3-ՐԴ ԳՈՏՈՒ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ և ՓՈՂՈՑՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N « ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/05

ք. Վանաձոր «20» դեկտեմբերի 2017 թ.

«Վանաձորի համայնքապետարան», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վանաձորի սանմաքրում» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Էդարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վանաձոր համայնքի 3-րդ գոտու կենցաղային աղբահանության և փողոցների սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պառասխել կամ բրեա կամ բանավոր ենթակա գուսարանները, ըստ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 50967000 (հիսուն միլիոն ինը հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ:

Գրասն ներառում է Կատարողը կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է, և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

7.1 Պայմանագրիս ուժի մեջ է, մտնում կողմերը ստորագրման պահից և գործում է սրբչս կողմերը պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության

ատուցման համար ամորտացիոն ֆրամասնական հատկացումները սպագեցման դեպքերը: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վանաձորի համայնքապետարան	<<ՎԱՆԱՁՈՐԻ
Տիգրան Մեծի 22	ՍԱՆՄԱՔՐՈՒՄ>>ԲԲԸ
Կենտրոնական գանձապետարան	ք. Վանաձոր Լոռվա խճ 13
ՀՎՀՀ 06901936	«Ինեկոբանկ»ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ900232545021	ՀՎՀՀ 06917685
	Հ/Հ 2050222010861001
Մ.Ասլանյան	Է. Էդարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

[2] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
« 20» դեկտեմբերի 2017թ. կնքված
ՀՀ Լ.ՄՎՔ ԳՀԾՁԲ 18/05 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	90511100	Վանաձոր համայնքի 3-րդ զոտու կենցաղային աղբահանություն և փողոցների սանիտարական մաքրում	դրամ	50967000	1	Տես ներքևում	Համաձայնագիր կնքելու պահից

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Բնութագիր

Վանաձոր համայնքի 3-րդ գոտու կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ պետք է իրականացնել Կենտրոն,Ցալկուտ, Ջուխտ Ախպուր թաղամասերի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Ամենօրյա մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան ժամը 830-ին: Փողոցների, մայթերի ու հրապարակների ամառային մաքրման ժամանակ կատարողը պետք է ապահովի սպասարկվող տարածքներից աղբի ու փոշու հեռացումը, բարելավի միկրոկլիման և նվազեցնի օդի փոշոտվածության աստիճանը: Սահմանված նորմաներին համապատասխան կցված սպասարկվող տարածքի սահմաններում՝ սկսելով աշխատանքը, կատարողը նախ և առաջ պետք է մաքրի փողոցը կամ հրապարակը:

Հիմնական մաքրումն իրականացնելուց հետո կատարողը պետք է հետևի սպասարկվող տարածքի մաքրությանը, հավաքի ծխախոտի մնացորդները, թղթի կտորները և այլ աղբի մնացորդները, մաքրի մայթերը, մերձվածքային մասը, տեղադրված աղբարկղերի շրջակայքը և տարածքների մաքրությունն ապահովող այլ պարտականություններ:

Մաքրվող տարածքներից կատարողը աղբը և փոշին պետք է մաքրի ավլելու միջոցով՝ օգտագործելով նաև գոգաթիակ:

Մաքրված աղբը և փոշին կուտերով պետք է հավաքի դրանց հետագա տեղափոխման համար նպատակահարմար միջկուտային հեռավորությամբ, և ապա համապատասխան մեքենայով տեղափոխվի մոտակա արտոնագրված աղբաթափման վայր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնի սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերի շրջակայքի սանիտարական վիճակին, աղբի ժամանակին հավաքման և տեղափոխման վրա:

Կենցաղային աղբահանությանը և սանիտարական մաքրումը պետք է ապահովվի ձյան տեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Պետք է իրականացվի գոյացող կենցաղային և ոչ կենցաղային աղբի հավաքման, պահման, փոխադրման, աղբավայրում տեղադրման և փողոցների, տարբեր տարողունակություն ունեցող աղբամանների աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները:

Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների իրականացման ժամանակ պետք է.

- նվազեցնել և չեզոքացնել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործությունը,
- ապահովել բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ, աղբի փոխադրման իրականացումը կազմակերպել՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը,
- աղբը տեղադրել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում:

Աշխատանքները կատարվելու են ամենօրյա, ձեռքի և մեքենայացված եղանակով:

Յուրաքանչյուր անգամ աղբարկղերը դատարկելուց մաքրել հարակից

աղբարկղը աղբատար սեքցիա դատարկելուց թափված աղբը և հարակից տարածքը մաքրել: Աղբարկղերը ամիսը մեկ անգամ ախտահանել հատուկ նյութերով: Վանաձոր համայնքի I գոտու տարածքում տեղադրված աղբարկղերից աղբը հեռացնել ամենօրյա հաճախականությամբ, իսկ մասնավոր հատվածում աղբահանությունն իրականացնել շրջիկ երթերի միջոցով, շաբաթը երկու անգամ: Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբամուղերը սպասարկել մինչև +5 C0-ի դեպքում երկու օրը մեկ անգամ, +5 C0-ից ավել ջերմաստիճանի առկայության դեպքում ամեն օր: Աղբամուղի տարածքն ավլել և մաքրել: Մեքենաները աղբավայր մեկնելուց հետո անպայման ենթարկվել աղտահանիչ միջոցներով լվացման: Ինքնաթափ մեքենաներով աղբի տեղափոխումը իրականացնելու ժամանակ մեքենաները պարտադիր պետք է ծածկոցներով ծածկված լինեն: Աղբահանությունը անհրաժեշտ է իրականացնել Վանաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի հետ նախապես համաձայնեցված գրաֆիկով:

Թարմ, դեռևս չամրացած ձյունը մինչև 2սմ. հաստության շերտով պետք է մաքրվի ցախավելի միջոցով, իսկ 2 սմ-ից ավելին՝ քերելով (քերիչ-թիակով): Բարելավված ծածկույթ ունեցող տարածքներից ձյունը պետք է մաքրվի լրիվ, իսկ անբարեկարգ տարածություններից՝ ոչ լրիվ, թողնելով ձյան մի շերտ (ամրացած) հետագա տեղումների մաքրելը հեշտացնելու համար:

Տարածքներից հավաքված ձյունը պետք է վերածվի թմբերի կամ կույտերի, որոնք դասավորվեն մայթերին զուգահեռ:

Տրանսպորտի նորմալ երթևեկությունն ապահովելու նպատակով ձնաթմբերը պետք է կուտակվեն այնպես, որ նրանց հիմքերի լայնությունը 1,5 մ-ից ավելի չլինի:

Այնուհետև հավաքված ձյունը պետք է տեղափոխվի սպասարկվող տարածքներից: Ձյան ամրացումից խուսափելու նպատակով տեղումների սկզբնական շրջանում նպատակահարմար է ձյունը մշակել ավազի և քլորիդների (ըստ տեխնոլոգիայի) խառնուրդով:

Սառցակալած կամ պնդացած ձյան շերտը սպասարկվող տարածքներից պետք է մաքրվի այն նախապես բայբայելուց կամ ջարդելուց հետո: Սառցակտորների հեռացումը պետք է կատարվի կոտրելուց և կուտակելուց անմիջապես հետո: Մինչև 2 սմ. հաստությամբ սառցակույտերը, նախքան մաքրումը, պետք է մշակվեն քլորիդներով:

Հավաքված ձյան և սառցե կույտերը մեքենաների միջոցով պետք է հեռացնել մայթերից:

Ըստ սպասարկվող տարածքների մայթերի, ու հրապարակների ձմեռային մաքրումը պետք է կատարվի նույն հերթականությամբ, ինչ-որ ամառային մաքրման դեպքում:

3-րդ գոտու փաստացի մաքրվող մակերեսը 73592.8 մ^2: Մաքրման ենթակա փողոցների ցանկը նախապես կներկայացվի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կողմից: Մաքրվող տարածքից մինչև մոտակա արտոնագրված աղբաթափման վայր երկարությունը կազմում է 32 կմ: Կենցաղային աղբի կուտակման քանակը 2018 թվականին 3-րդ գոտու համար կանխատեսվում է 5423.77տն:

Հ/հ	**3-րդ գոտու սանիտարական մաքրման ենթակա փողոցների ցանկ**

1.	Գրիգոր Լուսավորիչ փողոց
2.	Կ. Դեմիրճյան փողոց
3.	Մյասնիկյան փողոց
4.	Հայքի հրապարակ
5.	Տիգրան Մեծի պողոտա
6.	Մ. Խորենացու փողոց
7.	Թումանյան հրապարակ
8.	Վ. Սարգսյանի անվան հրապարակ
9.	Գ. Նժդեհ փողոց
10.	Վարդավառի հրապարակ
11.	Մ. Գոշի փողոց
12.	Թումանյան փողոց
13.	Մոսկովյան փողոց
14.	Մ. Մկրտչյան փողոց
15.	Վարդանանց փողոց
16.	Թատերական փողոց
17.	Թումանյան էստակադա
18.	Լոռվա հրապարակ
19.	Սպանդարյան փողոց

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ900232545021

----------Մ. Ասլանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՎԱՆԱՁՈՐԻ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ>>ԲԲԸ
ք. Վանաձոր Լոռվա խճ 13
«Ինեկոբանկ»ՓԲԸ Վանաձորի մ/ճ
ՀՎՀՀ 06917685
Հ/Հ 20502220108610017

----------Է. Էդարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
« 20» դեկտեմբերի 2017թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ 18/05 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

հազ.դրամ

ա/հ/	Աշխատանքի անվանումը՝	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	4	5	6	7
•	Վանաձոր համայնքի 3-րդ գոտու կենցաղային աղբահանություն և փողոցների սանիտարական մաքրում				
1.	Վանաձոր համայնքի 3-րդ գոտում մեքենայի վագրի երկարություն	կմ	32		
2.	Վանաձոր համայնքի 3-րդ գոտու աղբի կուտակման բանակ /տն. տարի/	տ	5423.77	6.5	35254.5
3.	Վանաձոր համայնքի 3-րդ գոտու մաքրվող մակերես 1 օրվա համար	$մ^2$	73592.8	0.150	11039.0
	Ընդամենը՝				46293.5
	Վերադիր ծախսեր՝ 13.3%				2314.6
	Ընդամենը՝				48608.1
	Շահույթ՝ 11%				2358.9
	Ընդամենը՝				50967.0
	Ընդամենը՝				50967.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վանաձորի համայնքապետարան
Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 06901936
Հ/Հ900232545021

----------Մ.Ասլանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՎԱՆԱՁՈՐԻ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ>>ԲԲԸ
ք. Վանաձոր Լոռվա խճ 13
«Ինեկոբանկ»ՓԲԸ Վանաձորի մ/ճ
ՀՎՀՀ 06917685
Հ/Հ 2050222010861001

----------Է. Էդարյան
(ստորագրություն)
Կ.Տ.